ՓՈՐՁԱՐԿՎԵԼ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆ ԾՐԱԳԻՐԸ

11.04.2016 14:55



2016 թվականի ապրիլի 9-ին ՀՀ փաստաբանների պալատում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ մարզերում գործող հանրային պաշտպանների համար կազմակերպվել էր «Էլեկտրոնային հանրային պաշտպան» ծրագիրը թեմայով դասընթաց:

Դասընթացի նպատակն էր հանրային պաշտպաններին ծանոթացնել ծրագրին և համապատասխան տեղեկատվություն ու ծրագրից օգտվելու հմտություններ փոխանցել ներկաներին: Մարզերում գործող հանրային պաշտպանները տեղում փորձարկել են ծրագիրը, լսել դրա կիրառման սկզբնական դժվարություններին առնչվող հարցերի պատասխանները:
Դասընթացը վարել են ծրագրի հեղինակ Կարեն Տատինցյանը և ՀՊԳ ղեկավարի տեղեկալ Վարսեր Կարապետյանը:
Ծրագիրը Հանրային պաշտպանի գրասենյակում ներդրվել է 2015թ մարտի վերջին, իսկ ներդրման 2-րդ փուլը ավարտվելէ 2016թ մարտի 31-ին:
«Էլեկտրոնային հանրային պաշտպան» ծրագիրը հնարավորություն է տալիս միասնական և համակարգված իրականացնել Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեությունը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })